

Պոդոսյան Վահան Արմենի

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ը .00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մաս -
ն ազիտոլթյամբ տնտեսագիտոլթյան թեկնածուի
գիտական աստիճանի հայցման համար

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ե Ր Ե Վ Ա Ն 2018

**Ատե ն ախո ս ու լ թ յ ան թ ե մ ան հ աս տատվ ե լ է Յ այ աս տան ի
պե տակ ան
տն տե ս ազ ի տակ ան հ ամ ալ ս ար ան ու մ**

տն տե ս ազ ի տո ու թ յ ա
ն դ ո կ տո ո

Լ ի ան ա Յ այ կ ազ ի

Գ ի տակ ան դ ե կ ազ ար `

Գ ը ի գ ո ը յ ան

տն տե ս ազ ի տո ու թ յ ան

դ ո կ տո ո , պ ը ո Ֆ ե ս ո ո

Պ ա շ տո ն ա կ ան

Ա շ ո տ Բ ո ը ի ս ի

ը ն դ դ ի մ ախո ս ն ե ո `

Ս ալ ն ազ ար յ ան

տն տե ս ազ ի տո ու թ յ ան

թ ե կ ն ա ծ ո ո

Ն ար ե կ Յ ամ լ ե տ ի

Խ ո ո թ լ ար յ ան

Ա ո ա ջ ա տ ա ր

Յ Յ Գ Ա Ա Մ ի ք ա յ ե լ

կ ազ մ ա կ ե ը պ ո ո թ յ ո ո ն

Ք ո թ ա ն յ ան ի ան վ ան

տն տե ս ազ ի տո ու թ յ ան

ի ն ս տ ի տ ո ո ո

Ատե ն ախո ս ու լ թ յ ան պ ա շ տ պ ա ն ո ո թ յ ո ո ն ը կ ա յ ան ա լ ո ո է 2018թ .
մ ար տ ի 15-ի ն , ժ ա մ ը 14⁰⁰-ի ն Յ այ աս տան ի պ ե տակ ան
տն տե ս ազ ի տակ ան հ ամ ալ ս ար ան ո ո մ գ ո ը ծ ո ո Յ Յ Բ Ո Յ -ի
տն տե ս ազ ի տո ու թ յ ան թ ի վ 014 մ ա ս ն ազ ի տակ ան խ ո ը ի ը ո ո ո ո :

Յ ա ս ց ե ն ` 0025, Ե ը ո ան , Մ . Ն ա լ թ ա ն դ յ ան փ ո ո . , 128:

Ատե ն ախո ս ու լ թ յ ան ը կ ար ե լ ի է ծ ա ն ո թ ա ն ա լ Յ այ աս տան ի
պ ե տակ ան տն տե ս ազ ի տակ ան հ ամ ալ ս ար ան ի
գ ը ա դ ար ան ո ո ո :

Ս ե ո մ ազ ի ը ն ա ո ա ք վ ա ծ է 2018թ . փ ե տ ը վ ար ի 13-ի ն :

014 մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար,

տնտեսագիտության դոկտոր - Մանուկ Ֆեսոբ

Ս.Ա.

Գևորգյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությանը ուղղված

Առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեությունը, որպես կանոն, ուղեկցվում է ֆինանսական ռիսկերի ձևավորմամբ, որոնք գրեթե միշտ առկա են գործարարության ոլորտում: Ձեռնարկատիրությունը տնտեսավարման մյուս բնագավառներից (հանրային, սոցիալական, բարեգործական) տարբերվում է հենց նրանով, որ առավելագույն շահույթի ձգտման պարագայում պահանջվում է իրականացնել որոշակի և բազմաբնույթ ռիսկային գործարքներ, որոնցում էական տեսակարար կշիռ ունեն ֆինանսական ռիսկերը: Այս առումով, արդիական է համարվում առևտրային կազմակերպություններում ֆինանսական ռիսկերի կառավարչական հաշվառման և վերլուծության բարելավման ուղիների որոնումը, որոնց առնչությամբ տարբեր տեսաբաններ տարբեր մոտեցումներ են ցուցաբերում:

Ընդհանուր առմամբ, ֆինանսական ռիսկերի գնահատման և վերլուծության մեթոդաբանական հարցերը ներկայումս լայնորեն քննարկվում են ինչպես տեսաբանների շրջանում, այնպես էլ գործնական ոլորտում, մինչդեռ, նույնը չի կարելի ասել ռիսկերի կառավարչական հաշվառման մասին: Այսպես՝ այսօր ՀՀ առևտրային կազմակերպություններում կիրառվող կառավարչական հաշվառման շրջանակը սահմանափակվում է միայն ծախսային հոսքերի հաշվառմամբ և թողարկվող արտադրատեսակների կամ մատուցվող ծառայությունների փաստացի ինքնարժեքի կալկուլյացիայով: Փաստորեն, այդպիսով գրեթե անտեսվում կամ շրջանցվում է տնտեսավարման, մասնավորապես՝ ֆինանսական ռիսկերի հաշվառման գործընթացը: Հարկ է նշել, որ վերջինս կանոնակարգվում է միայն առևտրային բանկերում՝ բանկային գործունեության ռիսկերի կառավարման տեսանկյունից (ռիսկերի չափում, կանխարգելում, հաշվետվությունների ներկայացում), սակայն,

միաժամանակ, այդ տեղ նույնպես բացակայում է
ռիսկերի կառավարչական հաշվառման և
վերլուծության համակարգը՝ էականորեն
նվազեցնելով համապատասխան ոլորտում
որոշումներին կայացման արդյունավետության
մակարդակը:

Յետևաբար՝ արդիական է համարվում կառավարման
օղակներին այնպիսի տեղեկատվության մատուցումը՝
ըստ որի հնարավոր կլինի հիմնավորել, գնահատել,
չափելի դարձնել առաջացող \$ինանսական ռիսկերը,
վերլուծել դրանց ազդեցությունն առևտրային
կազմակերպությունների \$ինանսական
միկրոհավասարակշռության ապահովման վրա՝
համաձայն ձևավորման բնույթի, ինչպես նաև որոշել
ռիսկայնության թույլատրելի սահմաններն ու
ռիսկահատույցը:

Կազմակերպությունների \$ինանսական ռիսկերի
կառավարման, վերլուծության և գնահատման
հիմնախնդիրների մեկնաբանումներ, քննարկումներ
ու լուծման ուղիների առաջադրումներ կարելի է
գտնել ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայազգի
հեղինակների աշխատությունում, սակայն
առևտրային կազմակերպությունների առումով,
վերոնշյալ հիմնախնդիրները դեռևս չեն ստացել
խորքային լուծումներ, ինչն էլ կանխորոշել է
ատենախոսության թեմատիկ ուղղվածությունն ու
կատարված հետազոտության նպատակադրումները:

Յե տազ ո տո լ թ յ ա ն ն պատակ ը և խնդիր ներ ը

Յե տազ ո տո լ թ յ ա ն ն պատակ ն է առևտրային
կազմակերպությունների \$ինանսական ռիսկերի
կառավարչական հաշվառման և վերլուծության
բարելավված համակարգի մշակումը՝
տեղեկատվության ապահովվածությամբ նպաստելով
ռիսկերի գծով որոշումներին կայացման
արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

Ելնելով հետազոտության նպատակից՝
ատենախոսության ուղևում առաջադրվել են հետևյալ
խնդիրները.

➤ մշակել \$ինանսական ռիսկերի կառավարչական
հաշվառման և վերլուծության այնպիսի հայեցակարգ,
որտեղ հաշվի կառնվեն ռիսկերի ձևավորման առանձ-
նահատկություններն առևտրային
կազմակերպությունում և կներկայացվեն դրանց
ճանաչման և գնահատման նոր մոտեցումներ,

➤ ուսումնասիրել \$ինանսական ռիսկերի
ձևավորման պատճառները, ինչպես նաև այն
նորմատիվային և ներքին իրավական ակտերը, որոնք

միտված են ՀՀ առևտրային կազմակերպություններում տվյալ ոլորտի կարգավորմանը,

➤ առաջարկել ռիսկերի արձանագրման, չափման և փաստաթղթավորման համակարգային գործընթացներ, որոնք հնարավորություն կտան առևտրային կազմակերպություններում իրականացնելու \$ինանսական ռիսկերի կառավարչական հաշվառում և վերահսկողություն,

➤ փոխկապակցելով \$ինանսական և կառավարչական հաշվառման տեղեկատվական հոսքերը՝ մշակել առևտրային կազմակերպությունների \$ինանսական ռիսկերի ձևավորման հաշվետվական համակարգ՝ ըստ «\$ինանսական հաշվետվություններ - ռիսկերի ձևավորման կառավարչական հաշվետվություններ - ռիսկերի գծով որոշումներ կայացման հաշվետվություններ» շղթայի,

➤ ներկայացնել կառավարչական վերլուծության և հաշվետվողականության նոր մեթոդաբանություն, որը թույլ կտա իրականացնել առևտրային կազմակերպությունների \$ինանսական միկրոհավասարակշռության վրա ռիսկերի ազդեցություն աստիճանի սցենարային գնահատումներ, ռիսկերի փոփոխման վրա ազդող քանակական և որակական գործոնների բացահայտումներ, ինչպես նաև նպաստել հասցեական կառավարչական որոշումների կայացմանը:

Հե տազ ո տո լ թ յ ա ն օ բ յ ե կ տը և առ ար կ ա ն :

Հե տազ ո տո լ թ յ ա ն օ բ յ ե կ տը Հայաստանի Հանրապետության առևտրային կազմակերպություններն են՝ դրանց գործունեությունը բնորոշ \$ինանսական ռիսկերի շրջանակով:

Հե տազ ո տո լ թ յ ա ն առ ար կ ա ն Հայաստանի Հանրապետության առևտրային կազմակերպությունների \$ինանսական ռիսկերի կառավարման ոլորտն է՝ միտված ռիսկերի կառավարչական հաշվառման և վերլուծության համակարգի բարելավմանը:

Հե տազ ո տո լ թ յ ա ն տե ս ա կ ա ն , մե թ ո դ ա բ ա ն ա կ ա ն և տե դ ե կ ա տ վ ա կ ա ն հ ի մ ք ե ր ը : Հե տազ ո տո լ թ յ ա ն համար տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել ռիսկերի գծով որոշումների կայացման, մասնավորապես՝ առևտրային կազմակերպություններում \$ինանսական ռիսկերի հաշվառման, վերլուծության, վերահսկողության վերաբերյալ հայրենական և արտասահմանյան մասնագետների աշխատությունները, գիտական հրատարակումները, մակրոտնտեսական վերլուծությունները:

Ուսումնասիրության մեջ կիրառվել են ֆինանսատնտեսական, վիճակագրական և գործունային մեթոդներ, ինչպես նաև ֆինանսական ռիսկերի ներքին աուդիտի ու վերահսկողության միջազգային փորձագիտական վերլուծության եղանակներ:

Յե տազոտու թյան գիտական նորոյ թը

Յե տազոտու թյան գիտական նորոյ թն առևտրային կազմակերպությունների ֆինանսական ռիսկերի կառավարչական հաշվառման և վերլուծության բարելավված համակարգի մշակումն է: Մասնավորապես.

- Մշակվել է ֆինանսական ռիսկերի արդյունքների դրամական չափման մեխանիզմ՝ ըստ որի հնարավորություն է ընձեռվում առևտրային կազմակերպություններում, անընդհատության սկզբունքով, իրականացնելու ռիսկերի ձևավորման արդյունքների ճանաչում, տնտեսական չափում, փաստաթղթային արձանագրում և հաշվապահական մշտադիտարկում,

- առաջարկվել են ֆինանսական ռիսկերի համակարգային հաշվառման մոտեցումներ՝ ներմուծելով դրանց ձևավորմանն առնչվող նոր հաշիվներ, կրկնակի գրանցման հենքով՝ ձևավորման և բաշխման նոր հաշվային թղթակցություններ՝ փոխկապակցելով ֆինանսական և կառավարչական հաշվառման տեղեկատվական հոսքերը,

- մշակվել են ֆինանսական ռիսկերի գործունային վերլուծության սկզբունքներ, որոնք թույլ են տալիս համապարփակ կերպով գնահատել ոչ միայն առևտրային կազմակերպությունների ֆինանսական դրությունը հավասարակշռությունը, այլև դրավրա ազդող քանակական և որակական գործոնների ազդեցության չափը, ռիսկային սպասումներից տնտեսական կորուստներն ու տնտեսավարման գործընթացում ֆինանսական կայունության ապահովման թույլ կողմերը,

- առաջարկվել է առևտրային կազմակերպություններում կառավարչական հաշվետվությունների կազմման ձևաչափ, որը հնարավորություն է կտա ներկայացնելու տնտեսական գործունեության ռիսկահատույցը՝ այդպիսով իսկ թիրախավորելով ֆինանսական ռիսկերի դրամային գնահատումներն ըստ պատասխանատվության կենտրոնների, սթրես-սցենարային գնահատումների ու հասցեական կառավարչական որոշումների:

**Հե տազ ո տո լ թ յ ան ար դ յ ո լ լ ն ք ն եր ի գ ի տազ ո թ Ն ա կ ան
և կ ի ր առ ա կ ան ն շ ա ն ա կ ո լ թ յ ո լ լ ն ք :** Ա տե ն ա խ ո ս ո լ թ յ ո լ լ ն ք
ն եր կ այ ա գ ն ո լ մ է առ ն տր այ ի ն
կ ազ մ ա կ եր պ ո լ թ յ ո լ լ ն ն եր ի \$ ի ն ա ն ս ա կ ան ռ ի ս կ եր ի`
հ ա շ վ ա պ ա հ ա կ ան հ ա շ վ առ մ ան , վ եր ա հ ս կ ո ղ ո լ թ յ ան և
կ առ ա վ ա ր չ ա կ ան ա ո լ դ ի տ ի տե ս ա կ ան ո լ գ ո թ Ն ա կ ան
ո լ ս ո լ մ ն ա ս ի թ ո լ թ յ ո լ լ ն ն եր ի հ ի մ ան վ թ ա մ շ ա կ վ ա ծ
հ ա մ ա լ ի թ հ ե տազ ո տո լ թ յ ո լ լ ն , ո թ ք ն եր առ ո լ մ է ո թ ո շ ա կ ի
հ ի մ ն ա ր ա ր առ ա ջ ա ր կ ո լ թ յ ո լ լ ն ն եր ` մ ի տ վ ա ծ Հ Հ
առ ն տր այ ի ն կ ազ մ ա կ եր պ ո լ թ յ ո լ լ ն ն եր ո լ մ ձ ն ա վ ո թ ղ ո ղ
ռ ի ս կ եր ի կ առ ա վ ա ր չ ա կ ան հ ա շ վ առ մ ան և
վ եր լ ո լ ծ ո լ թ յ ան ք ա ր ե լ ա վ մ ան ո լ ո ղ ի ն եր ի
ք ա գ ա հ այ տ մ ան ք :

Հե տազ ո տո լ թ յ ան ար դ յ ո լ լ ն ք ն եր ք կ ա ր ո ղ ե ն
գ ո թ Ն ա կ ան կ ի ր առ ո լ թ յ ո լ լ ն գ ա տ ն ե լ Հ Հ առ ն տր այ ի ն
կ ազ մ ա կ եր պ ո լ թ յ ո լ լ ն ն եր ո լ մ ` ն պ ա ս տ ե լ ո վ \$ ի ն ա ն ս ա կ ան
ռ ի ս կ եր ի կ առ ա վ ա ր մ ան ո լ ո թ ո տ ո լ մ ո թ ո շ ո լ մ ն եր ի
կ այ ա գ մ ան ար դ յ ո լ լ ն ա վ ե տ ո լ թ յ ան մ ա կ ա ր դ ա կ ի
ք ա ր ծ թ ա գ մ ան ք , \$ ի ն ա ն ս ա կ ան ռ ի ս կ եր ի հ ա շ վ ե տ վ ա կ ան
հ ա մ ա կ ա ր գ ի մ ե թ ո դ ա ք ա ն ո լ թ յ ան ք ա ր ե լ ա վ մ ան ք :

Հե տազ ո տո լ թ յ ան փ ո թ ար կ ո լ մ ք և
հ թ ա տ ա ր ա կ ո լ մ ն եր ք : Հե տազ ո տո լ թ յ ան առ ա ն ց ք այ ի ն
դ թ ո լ լ յ թ ն եր ք ք ն ն ա ր կ վ ե լ և հ ա վ ա ն ո լ թ յ ան ե ն
ա ր ժ ա ն ա գ ե լ Հ Պ Տ Հ «կ առ ա վ ա ր չ ա կ ան հ ա շ վ առ ո լ մ և
ա ո լ դ ի տ » ա մ ք ի ո ն ի դ ա ս ա խ ո ս ն եր ի կ ո ղ մ ի ց : Ա թ ծ ա ր ծ վ ա ծ
հ ա ր ց եր ն ո լ հ ի մ ն ա դ թ ո լ լ յ թ ն եր ք լ ո լ ս ա ք ա ն վ ե լ ե ն
ա տե ն ա խ ո ս ի հ ե ո ղ ի ն ա կ ա ծ ճ գ ի տ ա կ ան հ ո դ վ ա ծ ն եր ո լ մ :

Ա տե ն ա խ ո ս ո լ թ յ ան կ առ ո լ ց վ ա ծ ք ք և ծ ա վ ա լ ք : Ա տե ն ա-
խ ո ս ո լ թ յ ո լ լ ն ք ք ա ո կ ա գ ա ծ է առ ա ջ ա ք ա ն ի ց , եր ե ք գ լ խ ի ց ,
ե գ թ ա կ ա գ ո լ թ յ ո լ լ ն ն եր ի ց , օ գ տ ա գ ո թ ծ վ ա ծ գ թ ա կ ա-
ն ո լ թ յ ան ց ա ն կ ի ց ո լ հ ա վ ե լ վ ա ծ ն եր ի ց : Ճ ա ր ա դ թ վ ա ծ է 120
է ջ ո լ մ ` ն եր առ յ ա լ օ գ տ ա գ ո թ ծ վ ա ծ գ թ ա կ ան ո լ թ յ ան
ց ա ն կ ք :

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ն եր ա ծ ո լ թ յ ո լ լ ն ո լ մ հ ի մ ն ա վ ո թ ղ ո լ մ է թ ե մ այ ի
ա ր դ ի ա կ ան ո լ թ յ ո լ լ ն ք , ս ա հ մ ան վ ո լ մ ե ն հ ե տազ ո տո լ թ յ ան
ն պ ա տ ա կ ք և խ ն դ ի թ ն եր ք , ն եր կ այ ա գ վ ո լ մ ե ն օ ք յ ե կ տ ք և
առ ա ր կ ան , տե ս ա կ ան և տե ո ղ ե կ ա տ վ ա կ ան հ ի մ ք եր ք , գ ի տ ա կ ան
ն ո թ ո լ լ յ թ ք , ի ն չ պ ե ս ն ա ն ս տ ա գ վ ա ծ ա ր դ յ ո լ լ ն ք ն եր ի գ ի տ ա-
գ ո թ Ն ա կ ան ն շ ա ն ա կ ո լ թ յ ո լ լ ն ք :

Ա տե ն ա խ ո ս ո լ թ յ ան առ ա ջ ի ն ` **«Ֆ ի ն ա ն ս ա կ ան ռ ի ս կ եր ի
ք ն ո լ լ յ թ ն ո լ առ ա ն ձ ն ա հ ա տ կ ո լ թ յ ո լ լ ն ն եր ն առ ն տր այ ի ն
կ ազ մ ա կ եր պ ո լ թ յ ո լ լ ն ն եր ո լ մ»** գ լ խ ո լ մ ք ն ն ա ր կ վ ո լ մ ե ն
\$ ի ն ա ն ս ա կ ան ռ ի ս կ եր ի ձ ն ա վ ո թ մ ան ն ա խ ա դ թ յ ա լ ն եր ք և

գնահատման առանձնահատկությունները գործարարությունը ներկայացնում է: Ընդ որում, \$ինանսական ռիսկերի առկայությունը տվյալ ոլորտում չի դիտարկվում սոսկ որպես բացասական երևույթ, քանի որ դահատկապես առավել ցայտուն կերպով է դրսևորվում համարձակ և նորամուծական որոշումների կայացման պարագայում:

\$ինանսական ռիսկերի ձևավորումն առևտրային կազմակերպություններում ընկալվում է որպես բնականոն երևույթ: Տնտեսագիտական առումով, ռիսկերը չեն դիտարկվում սոսկ բացասական կողմերով, այլ մեկնաբանվում են հնարավորինս սկանխարգելման կամ ձևավորվող հավանական վնասների նվազեցման տեսանկյունից: Նման մոտեցումը բխում է այն հանգամանքից, որ \$ինանսական ռիսկերի առաջացման նախադրյալները պայմանավորված են որպես առևտրային կազմակերպություններ հանդես եկող իրավաբանական անձանց գործունեության բնույթով:

Այս առումով, մասնագիտական գրականության մեջ լուրջ քննարկումների տեղիք են տալիս տնտեսական ռիսկերի բազմաբնույթ սահմանումները: Ըստ \$ինանսատնտեսական ռիսկի համընդհանուր սահմանման, որն արտացոլված է \$ինանսաբանկային հանրագիտարաններում, ռիսկը բացասական հետևանքներ ունեցող հավանական իրադարձություն է: Գոյություն ունի նաև նույնատիպ այլ ընտրանքային սահմանում՝ համաձայն որի ռիսկն անկանխատեսելի վնասների ու տնտեսական եկամուտների կորուստների վտանգ է: ¹ Ըստ մեկ այլ՝ առավել համընդհանուր բնորոշման, ռիսկն անբարենապաստ հավանական իրադարձություն է, որի հետևանքով կազմակերպության տնտեսական գործունեությունից դրական սպասելիքները լիարժեքորեն չեն իրականանում և փաստացի փոքր են նախատեսվածից: ²

Առևտրային կազմակերպություններում \$ինանսական ռիսկերի ձևավորման ազդակները, նախ և առաջ, դրսևորվում են սեփական և փոխառումիջոցների կառուցվածքային փոփոխությունում՝ գործարարություն կայուն զարգացում ապահովելու նպատակով պարտավորությունների մարման կարողությունների, ինքնավարությունն աստիճանի, ինչպես նաև կապիտալի համարժեքության բացահայտման համատեքստում: Ուստի \$ինանսական ռիսկերի բնորոշման հիմքն առաջին հերթին պետք է

¹ Бюлер К., Притч Г., Обуздание риска. Вестник McKinsey, № 4, 2003, с. 111-121.

² Тепман А.Н., Управление рисками в условиях финансового кризиса, М.ЮНИТИ, 2011, 295 с.

փնտրել հենց \$ինանսական գործունեության մեջ՝
պայմանավորված ոչ միայն տվյալ հասկացություն
բովանդակությունը, այլև կազմակերպությունում
ներդրված սեփական կապիտալի, ինչպես նաև դրան
գուգահեռ ձևավորված փոխառու միջոցների
մեծության ու կառուցվածքի փոփոխություններով:
Այսպիսով՝ որքան համահունչ լինեն սեփական և
փոխառու միջոցների կառուցվածքային
փոփոխություններն առևտրային
կազմակերպություններին կայուն զարգացման
ընթացքին, այնքան ավելի կնվազեն գործարարության
\$ինանսական ռիսկերը:

Առևտրային կազմակերպություններում
\$ինանսական ռիսկերի կառավարչական
վերլուծության նպատակով առաջարկվում է
իրավիճակային գործակիցների համախումբ
(գծապատկեր 1), որը հաշվարկվում է ավանդական՝
սահմանափակող գործակիցների ընդունելի
սահմանային մեծությունների վերանայմամբ:
Այսպես՝ տեսանելի ապագայի համար, տնտեսավարման
բնականոն ռիսկային գոտու վերլուծության
պարագայում, առևտրային կազմակերպություններում
ավանդաբար կիրառվող՝ \$ինանսական վիճակը
բնորոշող (իրացվելիության, գործարարակտիվության,
շահունեություն, կապիտալի ինքնաբավության)
գործակիցների սահմանաչափերը վերանայվում են Δa ,
իսկ հավանական կրիտիկական ռիսկային միջավայրի
սցենարի դեպքում՝ Δb մեծություններով: Ինչ
վերաբերում է անթույլատրելի ռիսկային
սցենարներին, ապա այս դեպքում \$ինանսական ռիսկերի
գնահատման գործակիցները ևս մեկ անգամ ճշգրտվում
են ըստ Δc մեծությունների՝ հանդես գալով հավելյալ
բաղադրիչներով (գծապատկեր 1):

Առևտրային կազմակերպություններում
սահմանային մեծությունների վերանայմամբ
\$ինանսական ռիսկերի գնահատման գործակիցների
կիրառումը հնարավորություն է տալիս կատարելու
համեմատական վերլուծություններ և սթրես-
սցենարային գնահատումներ՝ ըստ ռիսկ մեներջմենթի,
ինչը չափազանց կարևոր է ռիսկերի կրճատման,
հավանական անբարենպաստ հետևանքների
բազմազանեցման (դիվերսիֆիկացման), սպասվող
կորուստներից ապահովագրման ուղղություններով
կառավարչական որոշումներ կայացնելիս (գծապատկեր
1):

ՀՀ կազմակերպությունների կրեդիտորական և դեբիտորական պարտքերը 2016թ. (մլն դրամ)⁴

Ցուցանիշներ	Հանքարդյունաբերության	Մշակույթ, առողջապահություն, հասարակական կառուցվածք	Էներգետիկա, առողջապահություն	Ծիսարարություն	Ծառայություններ
Կրեդիտորական պարտքեր, որից՝	42 271	164 107	225 959	91 536	161 254
Ժամկետանց	0,0	208,4	0,0	109,2	8,1
Դեբիտորական պարտքեր, որից՝	33 903	213 688	212 177	68 757,9	205 294
Ժամկետանց	0,0	2 591	14 714	357,6	643,1
Կրեդիտորական պարտքերի՝ դեբիտորականի ն դեբիտորականի ն գերազանցում	8 368	-49 581	13 782	22 778,1	-44 040
Ժամկետանց կրեդիտորական պարտքերի՝ ժամկետանց դեբիտորականի ն գերազանցում	0,0	-2 383	-14 714	-248,4	-635
Պարտքեր՝ բանկային վարկերի և փոխառությունների գծով	375 215	579 610	534 994	37 019,1	313 402

ՀՀ առևտրային կազմակերպությունների՝ վերջին տարիների ֆինանսական հաշվետվությունների ամփոփ գնահատականը ցույց է տալիս, որ ակտիվների ձեռքբերման պարտավորությունների կառուցվածքում մեծ է տոկոսային, շուկայական, վարկային, արտարժույթային ռիսկեր պարունակող փոխառումիջոցների տեսակարար կշիռը, ինչը չի կարող ուղղակիորեն չանդրադառնալ կազմակեր-

⁴Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2017, էջ 401:

պոլթյոլեններում ֆինանսական ռիսկերի ձևավորման վրա (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ առևտրային կազմակերպությունների պարտավորությունների կառուցվածքը⁵

Ցուցանիշներ	Ընդամենը		Խոշոր	Միջին
	2015	2016	2015	2016
Առևտրային կազմակերպությունների քանակը	2476	2482	1316	1090
Պարտավորություններ,	100%	100%	100%	100%
այդ թվում՝				
կրեդիտորական պարտքեր	28.8%	26,2%	29,1%	25,9%
վարկային պարտավորություններ	71.2%	73.8%	70.9%	74,1%

Այս առումով, ֆինանսական ռիսկերի ձևավորման արդյունքների արժևորման պարագայում նպատակահարմար է կիրառել սեփական կապիտալի և փոխառու միջոցների կառուցվածքային տեղաշարժերի ու փոփոխությունների չափումները՝ պայմանավորված միջարք հանգամանքներով: Նախ՝ այս դեպքում հնարավոր է իրականացնել ֆինանսական ռիսկերի արդյունքների գծով դրամային չափումներ, և երկրորդ՝ քանի որ առևտրային կազմակերպությունների կապիտալը ու պարտավորություններն արդեն իսկ գնահատված, այսինքն՝ արժևորված են դրամային տեսքով, ուստի դրանց կառուցվածքային տեղաշարժերի արձանագրումը համապատասխան ցուցանիշներով առանձնակի դժվարություն չի ներկայացնում:

Ֆինանսական ռիսկերի չափման առաջարկվող մոտեցումներն աշխատանքում ներկայացված են ՀՀ հեռահաղորդակցության ոլորտում գործող կազմակերպությունների («Արմենտել» ՓԲԸ, «Ղտելեկոմ» ՓԲԸ և «Յուրբոմ» ՍՊԸ) օրինակով, քանի որ դրանց տարեկան հաշվետվությունները հրապարակված են և հասանելի: Ֆինանսական ռիսկերի նորմաները որոշվել են առևտրային կազմակերպությունների կողմից՝ հիմնվելով իրենց շուկայական դիրքի և նազմավարական ծրագրերի վրա: Վերլուծության համար

⁵ Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, ԱՎԾ, 2017, էջ 21:

ընտրվել են ընթացիկ իրացվել ինքնուրույն, ինքնավար
 ընթացիկ և կապիտալ ի համարժեք ընթացիկ
 ցուցանիշները:

Աղյուսակ 3

«Ղ-տեղեկոմ» ՓԲԸ ֆինանսական ցուցանիշները, 2014-2016
 թթ.⁶

«Ղ-տեղեկոմ» ՓԲԸ				
Ցուցանիշ	Չափվարկ	2016	2015	2014
Ընթացիկ իրացվել ինքնուրույն	Ընթացիկ ակտիվներ / ընթացիկ պարտավորումներ	3.8	4.8	4.0
Ինքնավար ընթացիկ	Ոչ ընթացիկ պարտավորումներ / ակտիվներ	0.005	0.004	0.003
Կապիտալ ի համարժեք ընթացիկ	Սեփական կապիտալ / ակտիվներ	0.90	0.92	0.91

«Յոլքոմ» ՍՊԸ ֆինանսական ռիսկերի վերլուծության արդյունքներից (աղյուսակ 4) պարզ է դառնում, որ տվյալ կազմակերպությունը, անբարենպաստ շեղումներ է արձանագրել սահմանված բոլոր ցուցանիշների գծով (աղյուսակ 3):

Աղյուսակ 4

«Յոլքոմ» ՍՊԸ ֆինանսական ռիսկերի գնահատումն ըստ պասիվային հոդվածների, 2015-2016 թթ.⁷

Ցուցանիշ	2016			Նորմա	Փաստագրործ
	Նորմա	Փաստագրործակից	Շեղումը նորմայից (դրամ)		
Ընթացիկ իրացվել ինքնուրույն	>4.8	0.77	18,100,150	>4.0	0
Ինքնավար ընթացիկ	<0.004	0.721	76,510,472	<0.003	0
Կապիտալ ի համարժեք ընթացիկ	>0.92	0.077	(89,943,501)	>0.91	0

⁶ Կազմված է ըստ «Ղ-տեղեկոմ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվությունների տվյալների:

⁷ Կազմված է ըստ «Յոլքոմ» ՍՊԸ ֆինանսական հաշվետվությունների տվյալների:

Ինչ վերաբերում է «Արմենտել» ՓԲԸ \$ինանսական հաշվետվություններին վերլուծությանը, ապա դրանից պակաս է դառնում, որ կազմակերպության ընթացիկ իրացվելիության ցուցանիշը 2016 թ. նորմայի սահմանում է, հետևաբար՝ պահպանելով ընթացիկ ակտիվների և պարտավորություններին հարաբերակցությունը, հնարավոր է կանխել անբարենպաստ շեղումներն այդ ուղղությամբ: Նույն կերպ, կազմակերպության կապիտալի համարժեքության ցուցանիշի գծով 2015 թ. արձանագրվել է նորմայից բարենպաստ շեղում, մինչդեռ սեփական կապիտալի և ակտիվների հարաբերակցության գծով շեղումները, մյուս կազմակերպություններին նույն ցուցանիշի համեմատ, 2016 թ. անբարենպաստ է եղել (աղյուսակ 5):

Առևտրային կազմակերպություններում \$ինանսական ռիսկերի գծով կառավարչական նոր հաշիվների վարման նպատակը պարբերականությունը թիրախավորված տեղեկատվության ստացումն է, որի միջոցով հնարավոր է պատասխանել հետևյալ հարցերին.

➤ որ ուղղությամբ են ձևավորվում \$ինանսական ռիսկերը,

➤ ինչ պիսի՞ն է ռիսկայնության աստիճանը ժամանակի որոշակի պահի,

➤ ինչ պիսի՞ն է \$ինանսական ռիսկերի ձևավորման և մարման դինամիկան:

Թվարկված նպատակադրումներին հասնելու համար առաջարկում ենք միմյանց հակակշռող՝ «\$ինանսական կայունություն» և «\$ինանսական փաստացի ռիսկեր» անվանումներով կառավարչական նոր հաշիվներին ներդրում, որոնք համադրելի են և հաշվետու ժամանակաշրջանի վերջին մնացորդ չեն ունենում: Ընդ որում, եթե «\$ինանսական փաստացի ռիսկեր» հաշիվը ցույց է տալիս, թե առևտրային կազմակերպության ակտիվների \$ինանսավորման որ ուղղություններն են առավել ռիսկային (կապիտալի համարժեքություն, պարտավորություններ), ապա «\$ինանսական կայունություն» հաշիվն արձանագրում է այն շեղումները, որոնց հետևանքով առաջացել են \$ինանսական միկրոհավասարակշռության խախտումներ:

Աղյուսակ 5

«Արմենտեկ» ՓԲԸ \$ ֆինանսական ռիսկերի գնահատումն ըստ պասիվային հոդվածների, 2015-2016 թթ.⁸

«Արմենտեկ» ՓԲԸ	2016			2015		
Ցուցանիշ	Նորմա	Փաստացի գործակից	Շեղումը նորմայից (դրամ)	Նորմա	Փաստացի գործակից	Շեղումը նորմայից (դրամ)
Ընթացիկ իրացվելիություն	>4.8	9.52	(11,763,371)	>4.0	1.59	6,906,537
Ինքնավարություն	<0.004	0.005	214,315	<0.003	0.01	351,257
Կապիտալի համարժեքություն	>0.92	0.918	(280,261)	>0.91	0.92	1,312,690

Ելնելով վերոնշյալից՝ անհրաժեշտություն է առաջանում բացելու լրացուցիչ կառավարչական հաշիվ, որտեղ կամփոփվեն սահմանված նորմաներից շեղումները, որոնք \$ ֆինանսական ռիսկեր են առաջացնում և խախտում են առևտրային կազմակերպությունների \$ ֆինանսական միկրոհավասարակշռությունը: Այս առումով, առաջարկվում է «\$ ֆինանսական կայունությունից շեղումներ» հաշիվը, որն ամփոփում է ոչ միայն \$ ֆինանսական ռիսկեր ձևավորող գործոնային արդյունքներն ըստ դրամական արժեքների, այլև փոխկապակցում է «\$ ֆինանսական փաստացի ռիսկեր» և «\$ ֆինանսական կայունություն» կառավարչական հաշիվները:

Համաձայն վերոնշյալ կառավարչական հաշիվների՝ առևտրային կազմակերպություններում հնարավոր է ձևավորել «\$ ֆինանսական կայունություն - շեղումներ - \$ ֆինանսական ռիսկեր» տեղեկատվական հոսքերը, որոնք բնութագրվում են անընդհատությամբ, հետևողականությամբ, հավաստիությամբ հատկանիշներով և ժամանակային տեսանկյունից տեղին են: Այդպիսով, բնականաբար, կարելի է ձևավորել ռիսկերի գծով արդյունավետ կառավարչական որոշումների կայացման բարենպաստ տեղեկատվական միջավայր:

Ատենախոսության երրորդ՝ **«\$ ֆինանսական ռիսկերի վերլուծության կատարելագործման ուղիներն առևտրային կազմակերպություններում»** գլխում ներկայացվում են ռիսկերի վերլուծության ընթացակարգի բարելավման ուղիներ:

⁸ Կազմված է ըստ «Արմենտեկ» ՓԲԸ \$ ֆինանսական հաշվետվությունների տվյալների:

Ֆինանսական ռիսկերի վերլուծության ընթացակարգի բարելավումն առևտրային կազմակերպություններում արդիական է համարվում մի շարք առումներով: Որպես կանոն, այդ գործընթացն առավելապես իրականացվում է ֆինանսատնտեսական գործակիցների կիրառմամբ՝ համեմատումներ կատարելով դրանց նորմատիվային և փաստացի մեծությունների միջև: Մյուս կողմից՝ ֆինանսական ռիսկերի վերլուծությունը կարող է հենվել մաթեմատիկական հաշվարկների վրա, ինչը գործնականում դժվար իրագործելի է առևտրային կազմակերպությունների կողմից: Սակայն, երկու դեպքում էլ բացակայում է ֆինանսական ռիսկերի վերլուծության հստակ ընթացակարգը, որի հետևանքով առևտրային կազմակերպություններում ռիսկերի գնահատման արժանահավատության մակարդակը չի բարձրանում:

Աղյուսակ 6


ՀՀ կազմակերպությունների պարտավորությունները և ժամկետանց պարտքերը (մլն դրամ)⁹

Ցուցանիշներ	2012	2013	2014	2015	2016
Պարտավորություններ՝ ընդամենը, որից՝					
ժամկետանց	816,5	862,5	2 154,0	22 225,7	927.6
Կրեդիտորական պարտքեր	553 547,7	602 481,8	661 145,5	782 828,2	801 346.5
ընդամենին կատմամբ (%), որից՝	25,3	28,0	25,2	29,1	25.9
ժամկետանց	743,7	822,5	1 995,5	22 115,7	927.6
Վարկեր և փոխառություններ	1 631 728	1 545 771,8	1 967 171	1 907 966	2 294 460
ընդամենին կատմամբ (%), որից՝	74,7	72,0	74,8	70,9	74.1
ժամկետանց	72,8	40,0	158,5	110,0	0.0

Ներկա ժամանակաշրջանում վերոնշյալ հիմնախնդիրը շուտափուլ լուծում է պահանջում, պայմանավորված այն իրողությամբ, որ վերջին տարիներին ՀՀ կազմակերպությունների ստանձնած

⁹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2017, էջ 400:

ռիսկային պարտավորությունները գգալի տեսակարար կշիռ են կազմում (աղյուսակ 6): Յետևաբար՝ օրախնդիր են \$ինանսական ռիսկերի արձանագրումն ու դրանց գնահատման նպատակով՝ հաշվապահական հաշվառման ճկուն քաղաքականություն վարումը:



Գծապատկեր 2. Առևտրային կազմակերպություններում \$ինանսական ռիսկերի կառավարչական վերլուծություն տեղեկատվական համակարգի առաջարկվող կառուցակարգ¹⁰

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, առաջարկվում է առևտրային կազմակերպություններում ներդնել \$ինանսական ռիսկերի գործունային վերլուծություն և տեղեկատվական հոսքերի համակարգման նոր մեթո-

¹⁰ Կազմել է ատենախոսը:

դաբանություն, որը հնարավորություն կտա ռիսկային կառավարման ոլորտում բարձրացնելու կայացվող որոշումների արդյունավետության մակարդակը:

Եզրակացություններ բաժնում գետեղվել են հետազոտության արդյունքները և կատարվել առաջարկություններ առևտրային կազմակերպություններում \$հնանսական ռիսկերի կառավարչական հաշվառման համակարգի բարելավման ուղղությամբ: Մասնավորապես՝

1. Ելնելով առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեության առանձնահատկություններից՝ առաջարկվել է \$հնանսական ռիսկերի նոր սահմանում. «\$հնանսական ռիսկը տեսանելի ապագայում անբարենպաստ հավանական տնտեսական իրադարձություն է, որը կարող է ձևավորել կորուստներ և սպասումներից ակնկալվող շեղումներ՝ առևտրային կազմակերպության ակտիվների ձեռքբերման աղբյուրների կառուցվածքային փոփոխությունների և դրանցից բխող տնտեսավարման սպասվող արդյունքների ներդաշնակության խախտման հետևանքով»:

Առաջարկվող սահմանումը համակողմանի է բնորոշում առևտրային կազմակերպություններում \$հնանսական ռիսկերի ինչպես ձևավորման նախադրյալները, այնպես էլ բնույթը: Նախ և առաջ, ընդգծվում է, որ \$հնանսական ռիսկերը հավանական անբարենպաստ սպասումներ են, որոնք առաջանում են կազմակերպությունների տնտեսական գործունեությանը գույքը նթաց:

Բացի այդ, նախանշվում են առևտրային կազմակերպությունների \$հնանսական ռիսկերի ձևավորման նախադրյալները, որոնք բխում են սեփական կապիտալի և փոխառու միջոցների մեծության կառուցվածքի փոփոխություններից: Ի վերջո, \$հնանսական ռիսկերի ձևավորման հավանականությունը մեծանում է, եթե տեսանելի ապագայում առևտրային կազմակերպության սեփական կապիտալի և փոխառու միջոցների կառուցվածքային տեղաշարժերն ու փոփոխությունները չեն համապատասխանում տնտեսավարման կայուն զարգացման նախանշված ընթացքին:

2. Առաջարկվել է առևտրային կազմակերպություններում \$հնանսական ռիսկերի «ախտորոշման» գործակիցների մեխանիզմ, որը հնարավորություն կտալու ծելու միջարք խնդիրներ:

Առաջին՝ վերանայված արժեքներով ավանդական գործակիցների կիրառումը, հաշվարկման պարզության

առուվով, ֆինանսական ռիսկերի կառավարման համակարգում ոչ միայն առավել հեշտ կիրառելի է, այլև նպատակահարմար՝ համեմատության տեսանկյունից: Ընդ որում, ռիսկային սպառնալիքների ձևավորման դինամիկայի համեմատումները կարող են կատարվել հորիզոնական և ուղղահայաց կտրվածքներով՝ հաշվի առնելով ինչպես վերլուծվող տարիները, այնպես էլ գործարարության տարբերությունները:

Երկրորդ՝ ֆինանսական ռիսկերի «ախտորոշման» գործակիցների առաջարկվող մեխանիզմը հիմնվում է տեսանելի ապագայում հնարավոր սցենարային զարգացումների վրա, որոնք համահունչ են ռիսկերից ակնկալվող հավանական իրադարձությունների՝ տարբերաստիճանների անբարենպաստ հետևանքների և կորուստների տրամաբանությանը:

Երրորդ՝ առևտրային կազմակերպություններում ֆինանսական ռիսկերի «ախտորոշման» գործակիցների կիրառմամբ հնարավոր է ոչ միայն փոխկապակցել սցենարային հավանական բացասական հետևանքները, այլև կառավարման համակարգում ժամանակին բացահայտել և վերլուծել միմյանց վրա շղթայաբար ազդող ռիսկային գործոնները, ինչը կարևորվում է ռիսկերի գսպման համապարփակ կառավարչական որոշումների կայացման ժամանակ:

3. Առևտրային կազմակերպությունների կառավարման, մասնավորապես՝ ֆինանսական ռիսկերի հաշվառման և վերլուծության համակարգերում առաջարկվել է իրականացնել մի շարք կարևորագույն քայլեր:

Առաջին՝ հաշվապահական հաշվառումը իր առջև խնդիր է դնում մշակելու ֆինանսական ռիսկերի ձևավորման հաշվետվական համակարգ, որը տեղեկատվական աղբյուր է հանդիսանալու ռիսկերի կառավարման համար: Այս առումով, անընդհատության սկզբունքով անհրաժեշտություն է ծագում կազմակերպելու ֆինանսական ռիսկերի ձևավորման արդյունքների տնտեսական չափում և փաստաթղթային արձանագրում, որոնք արդյունավետ գործիքներ են հանդիսանում ռիսկային տնտեսական հետևանքների մոնիտորինգի համար:

Երկրորդ՝ հաշվառման ավանդական փաստաթղթաշրջանառությանը գուգահեռ, կարևորվել է ֆինանսական ռիսկերի ձևավորումն արտացոլող փաստաթղթաշրջանառության ներդրումը, ինչը էական նշանակություն կարող է ունենալ ոչ միայն առևտրային կազմակերպությունների հաշվե-

տվող ականու թյան գործընթացի, այլև վերահսկողական գործառույթների կազմակերպման համար: Անընդհատու թյան սկզբունքով գործող՝ ֆինանսական ռիսկերի փաստաթղթավորման կառուցակարգի ներդրումը թույլ կտա, որ կազմակերպությունների կառավարման համակարգն օպերատիվ կերպով արձագանքի չարդարացված ռիսկային գործարքներին և ժամանակին կանխարգելի հավանական վնասները:

Երրորդ՝ ռիսկերի ձևավորման տեղեկատվության հետևողական վերլուծությունը հնարավոր է դառնում ոչ միայն բացահայտել, այլև մեկնաբանել ռիսկերի հետևանքները՝ այդ նպատակով օգտագործելով որոշակի չափանիշներ և ցուցանիշներ: Ընդ որում, ֆինանսական ռիսկերի ձևավորման ցուցանիշների հաշվարկը նպատակահարմար է իրականացնել ըստ գործող՝ ավանդական ֆինանսական վերանայված գործակիցների, որոնք նույնպես հանդես են գալիս սահմանային չափիչներով:

4. Կառավարչական հաշվառման համակարգում ֆինանսական ռիսկերի ճանաչման և չափման հիմնախնդիրներն առաջարկվել է լուծել առևտրային կազմակերպությունների ակտիվների ֆինանսավորման աղբյուրների նորմատիվային մեծություններից շեղումների գնահատման և արձանագրման ճանապարհով: Այդպիսով՝ հնարավորություն կընձեռվի ֆինանսական ռիսկերի հետևանքները ներկայացնելու դրամական չափիչներով, համադրելի դարձնելով առևտրային կազմակերպությունների տնտեսավարման մյուս ցուցանիշների հետ, ինչպես նաև ֆինանսական լարվածության տեսանկյունից գնահատելու միկրոտնտեսական հավասարակշռությունն ու ռիսկերի առաջացման հավանականությունը:

5. Առաջարկվել է առևտրային կազմակերպությունների կողմից ֆինանսական հաշվետվությունների հրապարակման կանոնակարգված համակարգի ներդրում, որը, իր հերթին, գործնականում կնպաստի ռիսկերի չափմանն անհրաժեշտ օբյեկտիվ տեղեկատվության ապահովմանը: Սա պայմանավորված է այն իրողությունով, որ ֆինանսական հաշվետվությունները, որպես կանոն, համապատասխանում են միջազգային չափորոշիչներին և միևնույն հրապարակումը՝ դրանց արժանահավատությունը գնահատվում է անկախ առևտրորակական կազմակերպությունների կողմից: Յետևաբար՝ ֆինանսական միկրոհավասարակշռության խախտումները կարող են ազդակ հանդիսանալ ֆինանսական լարվածության և ռիսկերի բացահայտման

առուվով, որի համար տեղեկատվական հիմք են առևտրային կազմակերպությունների հրապարակած հաշվետվությունները:

Իլրումն վերոնշյալի, առաջարկվել է նաև ներդնել \$ինանսական ռիսկերի համակարգային հաշվառման նոր մեթոդաբանություն՝ ըստ որի կառավարչական հաշվառման համակարգում կներառվեն \$ինանսական ռիսկերի ձևավորմանն առնչվող նոր հաշիվներ՝ փոխկապակցելով \$ինանսական և կառավարչական հաշվառման տեղեկատվական հոսքերը:

6. \$ինանսական ռիսկերի կառավարչական վերլուծություն հիմնական գործառնությունները առաջարկվում է իրականացնել հետևյալ ուղղություններով.

Առաջին, առևտրային կազմակերպությունների մրցակցային դիրքերի ամրապնդման նպատակով կառավարչական վերլուծությունը հետամուտ է լինելու հնարավորինս հավանական քիչ \$ինանսական կորուստներով և միկրոտնտեսական \$ինանսական հավասարակշռության ապահովմամբ՝ տեղեկատվական համակարգի ձևավորմանը:

Երկրորդ, կառավարչական վերլուծությունը իր կողմից կատարված սթրես սցենարային ուսումնասիրությունների արդյունքներով նպաստում է \$ինանսական կայունության ապահովման մրցակցային նորմատիվների ձևավորման և վերանայման մոնիտորինգին, որով առևտրային կազմակերպություններում հնարավորություններ են ստեղծվում \$ինանսական հետագա ռիսկերի գսպման ուղղություններով:

Երրորդ, կառավարչական վերլուծությունը թիրախավորվում է \$ինանսական ռիսկերի հետևանքով կազմակերպության տնտեսավարման կայունության ապահովման ուժեղ և թուլ կողմերի բացահայտմանը, ինչպես նաև ռիսկերի արդյունքում ձևավորվող հավանական \$ինանսական սպառնալիքների ձևավորմանը:

Չորրորդ, կառավարչական վերլուծությունը էականորեն ուղղորդվելու է առևտրային կազմակերպությունների \$ինանսական միկրոհավասարակշռության վրա ռիսկերի ազդեցության չափերի սցենարային գնահատումներին, դրանով իսկ նպաստելով այդ ոլորտում իրականացվող գործունային վերլուծության մեթոդաբանության արդյունավետ կիրառմանը:

7. \$ինանսական ռիսկերը չափելու և գնահատելու ց հետո անհրաժեշտ է դրանք համադրել լրացուցիչ

շահույթի ստացման այն մեծությու-
 ննների հետ, որոնք
 ձևավորվում են առևտրային
 կազմակերպությունների միջ-
 անակցում \$ինանսական ռիսկեր առա-
 ջացնող տնտեսավարման գործու-
 նեությունից: Այս առումով \$ինանսական
 ռիսկերի հիմնավորվածության
 ցուցանիշ է առաջարկվում ռիսկահատու-
 յցը, որը կարող է հաշվարկվել
 ըստ ռիսկերի ձևավորման
 ուղղությունների: Երբ, գործնականում
 դժվարությունների կառաջանան
 շահույթի աճը տարբերակելիս
 ըստ \$ինանսական առանձին
 ռիսկատեսակների (փոխառու-
 յությունների կամ կապիտալի
 կառուցվածքային տեղաշարժերի),
 ապա առևտրային կազմակեր-
 պությունների հիմնավորված-
 ությունների վերլուծության
 ժամանակ առաջարկվում է
 հաշվարկել համապարփակ
 ռիսկահատույց՝ շահույթի
 աճը հարաբերելով \$ինանսական
 ռիսկերի հաշվարկված
 արժեքային մեծությանը:

**Ատենախոսության հիմնական դրույթներն
 արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական
 հոդվածներում՝**

1. Պողոսյան Վ.Ա., Գրիգորյան Լ.Յ., Ռիսկի և
 եկամտաբերությունների հարաբերակցու-
 յությունը, օպտիմալ
 ներդրումային պորտֆելի արդյունավետու-
 յության վերլուծությունը, «Բանբեր 3 ՊՏՅ» գիտական
 հանդես, 1(45)/2017, էջ 91-97:
2. Պողոսյան Վ.Ա., Առևտրային կազմակեր-
 պությունների \$ինանսական ռիսկերի
 գնահատման առանձնահատկու-
 յությունները, «Այլընտրանք» գիտական
 հանդես, #1, հունվար-մարտ, 2017, էջ 55-62:
3. Պողոսյան Վ.Ա., \$ինանսական ռիսկերի
 հաշվառման և վերլուծու-
 յության գործառնությունները
 կազմակերպությունների կառավարման
 համակարգում, «Այլընտրանք» գիտական
 հանդես, #2, ապրիլ-հունիս, 2017, էջ 17-25:
4. Պողոսյան Վ.Ա., \$ինանսական ռիսկերի
 ձևավորման նախադրյալները և բնորոշու-
 յունքը առևտրային կազմակեր-
 պությունների մեջ, «\$ինանսներ և
 էկոնոմիկա», 1-2(197-198) 2017, էջ 73-76:
5. Պողոսյան Վ.Ա., \$ինանսական ռիսկերի
 չափման հիմնախնդիրները կառավարչական
 հաշվառման համակարգում, «Ակունք» ուսումնամեթո-
 դաբանական հոդվածների ժողովածու,
 թիվ 1(15), 2017, էջ 247-252:
6. Պողոսյան Վ.Ա., \$ինանսական ռիսկերի
 վերլուծության բարելավման ուղի-
 ները առևտրային կազմակեր-
 պությունների մեջ, «\$ինանսներ և
 էկոնոմիկա», #5-6(119-123) 2017, էջ 119-123:

ВАГАН АРМЕНОВИЧ ПОГОСЯН
ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНЧЕСКОГО УЧЕТА И АНАЛИЗА ФИНАНСОВЫХ
РИСКОВ В КОММЕРЧЕСКИХ ОРГАНИЗАЦИЯХ РА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 - «Финансы, бухгалтерский учет»

Защита диссертации состоится 15-го марта 2018г. в 14⁰⁰ часов, на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете по адресу: 0025, г. Ереван, ул. М. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Цель и задачи исследования:

Целью исследования является разработка усовершенствованной системы управленческого учета и анализа финансовых рисков коммерческих предприятий, что способствует информационному обеспечению принятия решений по управлению рисками. Исходя из цели исследования в диссертации были предложены следующие проблемы:

- разработать концепцию управления финансовыми рисками и бухгалтерского учета, в которой будут учтены новые подходы к распознаванию и оценке рисков на коммерческих организациях,
- проанализировать причины формирования финансовых рисков и на этой основе предложить пути совершенствования правовой и регулятивной базы управления и контроля финансовыми рисками коммерческих организаций,
- разработать систему отчетности по финансовым рискам организаций, связывая информационные потоки финансового и управленческого учета по цепочке «финансовые отчеты - отчеты об управлении рисками - отчеты результатов от принятий управленческих решений»,
- внедрить новую методологию управленческого учета на коммерческих организациях анализа и отчетности, тщательно изучая влияние рисков на финансовую устойчивость коммерческих организаций, раскрытие количественных и качественных факторов, влияющих на изменение рисков.

Научная новизна исследования

Научная новизна исследования заключалась в разработке новой системы управленческого учета финансовых рисков на коммерческих организациях. В частности:

- разработан механизм представления финансового рисков по денежным измерителям, который предусматривает на основе непрерывности признание результатов формирования финансовых рисков, их измерений, регистрации и бухгалтерского мониторинга,

- внедрены новые подходы управленческого учета финансовых рисков, новые бухгалтерские проводки - на основе двойной записи, что привело к сочетанию потоков финансовой и управленческой информации по рискам на коммерческих предприятиях,

- разработаны принципы факторного анализа финансовых рисков, которые дают возможность всесторонне оценить не только финансовое равновесие коммерческих организаций, но также влияние количественных и качественных факторов, влияющих на него, экономические потери от риска и недостатки финансовой устойчивости организаций,

- предложена новая система отчетности по управлению финансовыми рисками коммерческих организаций, представляющую рискоотдачу экономической деятельности, тем самым нацеливая финансовые риски по центрам ответственности, стресс-тестам и подчетным управленческим решениям.

Результаты исследований, рекомендаций, разработанных подходов и методов могут быть использованы коммерческими организациями РА способствуя повышению эффективности принятия решений в области управления финансовыми рисками и совершенствованию методологии отчетности о финансовых рисках.

**THE ISSUES OF MANAGERIAL ACCOUNTING AND ANALYSIS OF FINANCIAL RISKS IN
RA COMERCIAL ORGANIZATIONS**

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.03 – “Finance, Accounting”.

The defense of the thesis will take place on March 15, 2018, at 14⁰⁰ o'clock, at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics: 128 Nalbandyan str., Yerevan, 0025.

ABSTRACT

The purpose and objectives of the research:

The main purpose of the of the research is to develop an improved system of management accounting and analysis of the financial risks of commercial organizations that will help to make effective risk management decisions with the availability of information. The following objectives in the thesis based on the purpose of the research were proposed:

- to develop a concept of financial risk management and accounting that will take into account risk formation characteristics in commercial organizations and will introduce new approaches for risk recognition and assessment;
- to study the reasons for the formation of financial risks and study the normative and internal acts of the Republic of Armenia that regulate the field;
- to propose systematic processes for recording, measuring and documenting risks that will enable to organize managerial accounting and control of financial risks in commercial organizations,
- to develop a financial risk reporting system for commercial organizations that will link information flows of financial and managerial accounting a way that they are presented in a chain of "financial statements - risk formation managerial reports for decision making"
- to introduce a new methodology for managerial analysis and reporting, directed at the assessment of financial risk impact on micro equilibrium of commercial organizations with the use of scenario analysis and the disclosure of quantitative and qualitative factors affecting the change of the risk and targeted administrative decisions.

Scientific novelty of the research

The scientific novelty of the study was the development of a new system of financial risk management and accounting in commercial organizations. Specifically:

- A mechanism for presenting financial risk monetary assesment results has been developed, which gives an opportunity to organize the recognition of the results of financial risk formation, to do economical measurements, to record documentation and to monitor accounting of commercial organizations on ongoing bases.
- Financial risk systematic accounting methodology has been introduced, suggesting new accounts related to financial risk creation, new accounting records for financial risk based on double-entry basis, resulting in interconnected information flows of financial and managerial accounting for risks,
- A new methodology for financial risk analysis has been developed, which provides an opportunity to assess not only financial equilibrium of commercial organizations, but also the impact of quantitative and qualitative factors affecting it, the economic losses from risk expectations and the weaknesses of financial sustainability,
- A new system of managerial reporting in commercial organizations has been proposed, representing the risk benefits of economic activity, thereby targeting the monetary assesments of financial risks on responsive centers, stress scenario estimates and targeted managerial decisions.

The results of the research, recommendations, developed approaches and methods can have practical us in the Armenian commercial organizations, contributing to the effectiveness of decision-making in financial risk management and improving the financial risk reporting methodology.